ՄԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ

Ղարաբաղյան ճգնաժամից դուրս գալու ելքը միայն քաղաքական լուծման մեջ է, Արմենպրեսի թղթակիցներին ասաց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, կունակցության Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանը։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հոկտեմբերի 20-ին կայացած նիստում ԼՂԻՄ-ի հայազգի դեպուտատների միջոցառումը սկզբունքային էր, որը բխում է մեր ժողովրդի շահերից, ինչպես նաև մարդում ըստեղծված իրավիճակից։

Ֆ. Տարազևիչի հանձնաժողովի ներկայացրած որոշման նախագիծը, որով նախատեսվում է վերացնել հատուկ կառավարման կոմիտեն և փոխարինը ստեղծել ժամանակավոր արտակարգ հանձնաժողով, դրվեց որում Ադրբեջանի ներկայացուցչի մասնակցությամբ, բնականաբար չէր կարող բավարարել մեզ։ Անգամ այն դեպքում, երբ նախատեսվում է վերականգնել կուսակցության մարզկոմը և մարզային խորհուրդը, նման հանձնաժողովի ստեղծումը՝ թեկուզև արտակարգ լիազորություններով և Մոսկվայի ենթակայությամբ, անընդունելի է։

Պետք է ասեմ, շարունակեց Վ. Գաբրիելյանը, հենց սկզբից մեզ համար պարզ չէր, թե ինչ է նշանակում ինքնակառավարվող ինքնավար տերիտորիա, ինչ ստատուս է այն ունենալու և ինչով է տարբերվելու ինքնավար մարզից։

Նախագահությունում խոսք գընաց այն մասին, թե ինչու են տեղական իշխանությունները ամեն ինչ բարդում կենտրոնական մարմինների վրա, երբ շատ հարցեր կարելի է լուծել հենց տեղում՝ երկու հանրապետությունների և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների միջև կայացած երկխոսությունների օգնությամբ։ Դրան մենք առարկեցինք, ասելով, որ ազգամիջյան ճգնաժամը այնքան է խորացել, որ այդ հարաբերությունները վաղուց արդեն անցել են այն գիծը, որից հետո երկխոսությունը հնարավոր չէ, և որ կենտրոնական կառավարության միջամտությունը այսօր դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն։

Ես իմ ելույթում հստակ ասացի, շարունակեց Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղարը, որ եթե Լեռնային Ղարաբաղը դուրս չի բերվում Ադրբեջանի կազմից, անմիջապես չի ենթակայացվում կենտրոնական կառավարությանը, դա հարցի լուծում չէ։

Ժողովրդական դեպուտատի նման հայտարարությունը ամենևին էլ նրա քմահաճույքը չէր։ Ինչպես ասաց նա, մենք պարտավոր ենք հաշվի առնել ժողովրդի կամքը, մանավանդ որ անցած 70 տարիները ցույց են տվել, թե ինչ ասել է լինել ինքնավար ազգային միավորում Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում։ Կյանքը ցույց է տվել նման ֆեդերատիվ կառուցվածքի անճշմարտացիությունը, ուստի և պետք է նոր մոտեցում ազգային կազմավորումների ստատուսը որոշելիս։ Ես ստիպված էի հայտարարել, որ Գ. Տարազևիչի հանձնաժողովի ներկայացրած որոշման նախագիծը չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղի հայության շահերին, ուրեմն այն անընդունելի է։ Եվ եթե մենք ընդունենք նման մի որոշում, ապա էլ ավելի կխճճենք ազգամիջյան հարաբերությունների առանց այն էլ խճճված կծիկը։

Իսկ եթե այսօր ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելը անհնարին է, ապա այն Ադրբեջանի կազմից դուրս բերելը և կենտրոնին ենթակայացնելը միակ ճիշտ ելքն է։

Նման ոգով էին նաև ԼՂԻՄ-ի մյուս դեպուտատների ելույթները, որոնք արտահայտելով իրենց ընտրողների կամքը, անընդունելի համարեցին ներկայացված նախագիծը։

— Ընկեր Գաբրիելյան, կենտրոնական հեռուստատեսությամբ ու մամուլում եղավ հայտարարություն այն մասին, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում մշակվել են հարցի քաղաքական կարգավորման առաջարկություններ, որոնք տրվել են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին։ Որքանո՞վ է դա համապատասխանում ճշմարտությանը։

— Դա բացարձակապես չի համապատասխանում ճշմարտությանը։ Ուղղակի առաջարկություն է եղել մշակել որոշման նոր նախագիծ։ Մենք՝ Լեռնային Ղարաբաղի դեպուտատներս ոչ մի առաջարկություն չենք ստացել։ Մենք ամենաակտիվ մասնակցությունն ենք բերել նախագահության նիստին, փորձել ենք մեր ժողովրդի ցավն ու տառապանքը հասցնել ներկաներին և հաստատ մնացել մեր դիրքորոշման վրա։ Հենց մեր այդ հստակ դիրքորոշման շնորհիվ էր, որ նախագահությունը որոշման նախագիծը մերժեց ու պահանջեց պատրաստել նոր նախագիծ։

Զ. ԲԱԼԱԳԵՈՂՅԱՆ
Լ. ԱԶՐՈՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթ.)
Մոսկվա